ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «30» դեկտեմբերի 2016 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 79-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈՔՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ - 2016» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետով, հաշվի առնելով գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ- 2016» միջազգային մրցույթին ներկայացված կիրառական հետազոտությունների համատեղ նախագծերի հայտերի գնահատման նպատակով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի նիստի արձանագրությունը և ՌԴ «Գիտության և տեխնիկայի ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացմանն աջակցության հիմնադրամի» գլխավոր տնօրեն Սերգեյ Պոլյակովի 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N939/1 գրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում կիրառական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ - 2016» միջազգային մրցույթի արդյունքում ֆինասնավորման երաշխավորված թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ. Գալստյան) գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2017 թվականի հունվարի մեկից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
«30» դեկտեմբերի, 2016թ.
N 79-Ա հրամանի

ՑԱՆԿ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՌԴ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈՔՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ - 2016» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ

Հ/Հ	Ծածկագիր	Նախագծի անվանումը	Նախագծի ղեկավարը (ԱԱՀ)	Կազմակերպության անվանումը
1	16AR_2b011	ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի ԳՇԽ տարրերի ջերմային ընդարձակման մոնիտորինգի համակարգի և ջերմային տեղաշարժերի հսկման տեխնիկական մեթոդների մշակում	Պետրոսյան Վահրամ Գասպարի	ՀՀ էներգետիկ ենթատարածքների և բնական պաշարների նախարարություն «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ
2	16AR_2b009	Նավթահորերի կառավարման և մոնիտորինգի համար բարձր արդյունավետությամբ ինտելեկտուալ համակարգերի ստեղծում	Գասպարյան Օլեգ Նիկոլայի	ՀՀ ԿԳՆ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
3	16AR_1f005	ՌԴ Հարավի և Հայաստանի չորային ագրոկլիմայական գոտիներում մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի կայունությունը բարձրացնող պրեպարատների ստեղծում	Սադոյան Ռուզաննա Ռոբերտի	ՀՀ ԿԳՆ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ
4	16AR_2b016	Հիդրավլիկ վիբրացիոն ստենդ	Ուլիկյան Ազատուհի Թորոսի	ՀՀ ԿԳՆ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
5	16AR_1c002	«ԱՐԵԱԼ» արագացուցչում գերարագ պրոցեսների ուսումնասիրության համար լազերային տեխնոլոգիաների մշակում	Ցականով Վասիլի Մկրտիչի	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ
6	16AR_2h021	Մշակել և պատրաստել թորման եղանակով ջրերի մաքրման փորձարարական սարք օգտագործելով արևի և այլ տեսակի էներգիաներ	Եղիազարյան Գուրգեն Մարկոսի	ՀՀ ԿԳՆ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, Հ.Պետրոսյանի անվան Հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղ